

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայ-ուսական համալսարանի գիտության գծով պրոռեկտոր,
Վ. Գ. Դ., պրոֆեսոր,



[Handwritten signature]

Պ. Ս. Ավետիսյան

«23» 09 2024թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

**Արտաշես Արտավազդի Խալաթյանի ԺԲ. 00.01. «Պետության և իրավունքի
տեսություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն»
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական
ասպիրանտի հայցման համար ներկայացված «Հայաստանի երրորդ
հանրապետության պետական կառավարման ձևի էվոլյուցիայի
հիմնախնդիրները (տեսական-իրավական հետազոտություն)»
վերադասությամբ արտենախոսության վերաբերյալ**

Արտաշես Արտավազդի Խալաթյանի՝ (այսուհետ՝ Հեղինակ) թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Հայաստանի երրորդ հանրապետության պետական կառավարման ձևի զարգացման հիմնախնդիրների հետազոտությանը:

Ատենախոսության արդիականությունը հիմնավորվում է նրանով, որ պետական կառավարման, պետաիշխանական բարձրագույն մարմինների կազմավորման, գործունեության, քաղաքական համակարգի հետ դրանց փոխհարաբերության սահմանադրաիրավական հիմքերի առնչությամբ իրարամերժ դիրքորոշումների, դրանց իրացման գործընթացում գործնական բարդություններով պայմանավորված անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել Հայաստանի երրորդ հանրապետության պետական կառավարման ձևի զարգացումը նշված ժամանակաշրջանում և գտնել ամբողջական լուծումներ:

Ատենախոսության մեջ առաջադրվել են թեմային առնչվող տեսական-իրավական դրույթներ, քննարկվել, ընդհանրական կերպով բացահայտվել և վերլուծվել են Հայաստանի երրորդ հանրապետության կառավարման ձևի բնորոշ հատկանիշները նախասահմանադրական շրջանում, 1995թ. ընդունված Սահմանադրության, 2005 և 2015թթ. սահմանադրական փոփոխությունների համատեքստում:

Հեղինակն ուսումնասիրել է բավարար չափով մասնագիտական գրականություն, վերլուծել է թեմային առնչվող իրավակիրառ նյութերը, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթեր, ինչը հնարավորություն է տվել

անդրադառնալ խնդրո առարկա հարցադրումներին և դրանց համակողմանի վերլուծության արդյունքներով առաջադրել որոշակի եզրահանգումներ:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք, այն հնարավորություն է տվել նախապատվելի համամասնությամբ անդրադառնալու առավել ընդհանուր հարցադրումների քննարկմանը:

Ատենախոսությունում հեղինակը ցուցաբերել է ինքնուրույն հետազոտություն կատարելու, տեսական աղբյուրներից և գործնական նյութերից պատշաճ օգտվելու և ինքնուրույն եզրահանգումներ առաջադրելու կարողություններ:

Միաժամանակ, ատենախոսության առնչությամբ առկա են որոշ նկատառումներ, մասնավորապես՝

1. Ատենախոսության բովանդակության ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրահանգելու, որ ատենախոսությունը առավելապես համապատասխանում է ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությանը, քանի որ հետազոտությունն իրականացվել է սահմանադրաիրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության հիման վրա, մինչդեռ այն ներկայացված է ԺԲ. 00.01. «Պետության և իրավունքի տեսություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ:

Դրա վկայությունն է նաև այն, որ աշխատանքում հիմնականում առաջ է քաշվում Սահմանադրությունում և/կամ օրենսդրությունում փոփոխություններ կատարելու առաջարկներ: Պաշտպանության ներկայացվող դրույթներում բացակայում են նաև համատեսական նշանակության բնորոշումներ կամ ընդհանրացումներ:

Բացի այդ, աշխատանքում պետական կառավարման ձևի էվոլյուցիայի հիմնախնդիրները ուսումնասիրված են մակերեսորեն:

2. Պաշտպանության ներկայացված երրորդ դրույթում Հեղինակն առաջարկում է փոփոխություն կատարել ՀՀ Սահմանադրության մեջ և վարչապետին օժտել զինված ուժերի գերագույն հրամանատարի անվերապահ կարգավիճակով: Այս մոտեցումը ամրապնդում է իշխանության անձնավորումը, որն ավելի հեռացնում է երկիրը պառլամենտարիզմից:

3. Չորրորդ, հինգերորդ և վեցերորդ դրույթները որևէ գիտական նորույթ չեն ներկայացնում: Ներկայացված մոտեցումները առաջ են քաշվել և հիմնավորվել դեռևս 2016 թվականին, Ալեքսանդր Հարությունյանի «Կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մեջ:

4. Աշխատանքի «Եզրակացություն» բաժնի 3-րդ կետում հեղինակը փորձել է հակասություն տեսնել 1990թ. օգոստոսի 23-ին Գերագույն խորհրդի կողմից ընդունված Անկախության հռչակարգի և 1995թ. Սահմանադրությամբ և դրա 2005թ. փոփոխությունների միջև (կառավարման տեսակի համատեքստում): Նման պնդումն անընդունելի է, քանի որ Անկախության հռչակագիրը հանրապետական

կառավարման տեսակի ընտրության հարց չի լուծել, պարզապես որոշ հարցերի համատեքստում փաստել է այդ պատմաշրջանում առկա կառավարման տեսակը:

5. Առկա են բազմաթիվ մերժիրավական մոտեցումներ, որոնք ավելի շատ սուբյեկտիվ քաղաքական մոտեցման արտացոլում են, քան գիտականորեն հիմնված իրավական հետազոտություններ, օրինակ՝ էջ 98-րդ էջում հեղինակը նշում է՝ 2018թ. հեղափոխությունը՝ որպես բռնապետական քաղաքական ռեժիմից ժողովրդավարական քաղաքական ռեժիմի անցման գործընթաց, տեղավորվեց սահմանադրականության շրջանակում՝ շնորհիվ խորհրդարանական կառավարման ձևի վերոնշյալ դրական հատկանիշների՝ կապված իշխանության «գնի» նվազման, անձնիշխանության ինստիտուցիոնալ հենքի բացակայության, քաղաքական իշխանության հավակնորդների միջև իշխանական լծակների բաշխման համամասնության ապահովվածության:

Հեղինակի սուբյեկտիվ քաղաքական մոտեցումները բացասական են ազդել գիտական հետազոտության օբյեկտիվության սկզբունքի վրա: Օրինակ՝ Հեղինակը աշխատանքում չի քննարկել ներկայիս քաղաքական իշխանության կողմից դատական իշխանության նկատմամբ իրականացված վարքագիծը, չի տվել դրա վերաբերյալ որևէ գնահատական:

Անձնիշխանության բացակայության մասին Հեղինակի քաղաքական բնույթի դատողության համատեքստում, հետազոտման համակողմանիության սկզբունքը պահանջում էր, որպեսզի Հեղինակը քննարկեր նաև ներկայիս «վարչապետական կառավարման մոդելի» պարագայում վարչապետի անձնային գործոնի ազդեցության աստիճանը:

6. Հեղինակը բավարար չափով ուսումնասիրության չի ենթարկել հայ իրավագետների մոտեցումները: Սույն թեմայի շրջանակներում կարևոր էր ուսումնասիրության ենթարկել Վ. Ստեփանյանի, Հ. Ստեփանյանի, Հ. Կեսոյանի գիտական աշխատությունները և հոդվածները, մասնավորապես՝ «խորհրդարանական կառավարման ձևի արդի հիմնախնդիրները, վերտառությամբ կոլեկտիվ մենագրությունը (Վ. Ստեփանյան, Հ. Ստեփանյան, Հ. Կեսոյան, Երևան 2020), որում մանրակրկիտ վերլուծվել են Հայաստանի Հանրապետության կիսանախագահական և խորհրդարանական կառավարման ձևերի և մոդելների հիմնական առանձնահատկությունները, կառավարման խորհրդարանական ձևի «հայաստանյան մոդելի» առանձնահատկությունները և առաջ են քաշվել գիտականորեն հիմնավորված լուծումներ ոլորտում առկա հիմնախնդիրների վերաբերյալ:

Աշխատանքը, գրված է գրական պատշաճ լեզվաոճով, այն գրեթե զերծ է թերի, բազմիմաստ ու խրթին մտքերից, լեզվական ու քերականական կանոնների շեղումներից, սակավաթիվ են նաև վրիպակները:

Ամփոփելով ատենախոսության վերաբերյալ նկատառումներ՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ **Արփաշես Արփավազդի Խալաթյանի «Հայաստանի երրորդ**

